ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԲԿ ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/04» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 05.01.2019թ.

Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մարիամ Ենոքյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Արևիկ Մարության, Մարի Ստեփանյան

Քարտուղար՝ Երանուհի Սարգսյան

ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/04 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հանձնաժողովը սկսեց գնահատման արդյունքների ամփոփումը:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա գնահատող հանձնաժողովը 1-ին տեղ զբաղեցնողների մասնակցության իրավունքները գնահատեց բավարար:
2. Մասնակիցների կողմից ներկայացված հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց.

2.1 Կասեցնել նիստը: «Երմեդ» ՍՊԸ-ին, «Արմֆարմ» ՍՊԸ-ին, «Զորաշեն» ՍՊԸ-ին և «Թեոֆարմա» ՍՊԸ-ին տրամադրել մեկօրյա ժամկետ ներկայացված տեխբնութագրերում շտկումներ իրականացնելու համար:

Մասնավորապես.

N 1 չափաբաժնով Երմեդ ՍՊԸ-ն տեխնիկական բնութագիր չի ներկայացրել,

N2 և N3 չափաբաժիններով «Արմֆարմ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ապրանքային նշաններ և արտադրող կազմակերպության մասին տեղեկատվություն, ներկայացված չէ նաև Fresenius Medical Care F4008 սարքերի հետ համատեղելության հավաստումը,

Առաջարկվում է ներկայացնել առաջարկվող ասեղների ապրանքային նշանը, արտադրող կազմակերպության անվանում և Fresenius Medical Care 4008 սարքի հետ համատեղելությունն ապացուցող հիմնավորում հաստատված սարքերն արտադրողի կողմից:

N4, N5 և N6 չափաբաժիններով «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով սահմանված է, որ Serumwerk Bernburg Vertriebs GmbH արտադրողի VitaPES 140 և VitaPES 160 դիալիզատորները մանրէազերծվում են գամմա ճառագայթմամբ, սակայն ըստ կատարված ուսումնասիրության վերոնշյալ դիալիզատորի մանրէազերծումը կատարվում է այլ մեթոդով: Կցվում է օգտագործման հրահանգը: Ինչպես նաև, ներկայացված չէ Fresenius Medical Care F4008 սարքերի հետ համատեղելության հավաստումը,

Առաջարկվում է՝

1. շտկել անհամապատասխանությունը, կամ ներկայացնել արտադրողի կողմից հաստատված հիմնավորում ներկայացված տեխնիկական բնութագրի վերաբերյալ:

2. ներկայացնել VitaPES 140 դիալիզատորների Fresenius Medical Care 4008 սարքի հետ համատեղելությունն ապացուցող հիմնավորում հաստատված սարքերն արտադրողի կողմից:

N 11 չափաբաժնով «Թեոֆարմա» ՍՊԸ-ն չի ներկայացրել Fresenius Medical Care F4008 սարքերի հետ համատեղելության հավաստումը:

Առաջարկվում է ներկայացնել Fresenius Medical Care 4008 սարքի հետ համատեղելությունն ապացուցող հիմնավորում հաստատված սարքերն արտադրողի կողմից:

«ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/04» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել 07.02.2019 թվականին ժամը 12:00, հասցեն՝ ք. Երևան, Գյուրջյան 10 հասցեում:

Հանձնաժողովի նախագահ՝	Մարիամ Ենոքյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Արևիկ Մարության
Գնահատող հանձնաժողովի անդամ	Մարի Ստեփանյան
Գնումների համակարգող՝	Երանուհի Սարգսյան